«Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս և Աստուած ողորմի ասացէք տէր Գալուստ կրօնաւորին, և» (կ՝երեւի որ յիշատակարանս պիտի շարունակուէր էջ 31ա և 31բ–ի վրայ՝ որոնք պարապ կը մնան)։

Բ. – Էջ 58ա գրչէն. «Ո՞վ հոգեւոր հայրք և եղբարք. յորժամ ընթեռնուք զսաղմոս Դաւթեան, յիշեցէք ի սուրբ և ի մաքուր յաղօթս ձեր և Աստուած ողորմի ասացէք Ապարանցի Սիմէոն վարդապետի աշակերտ, սրբասէր և մաքրամիտ Տէր Աւետիս կրօնաւորին և ծնողաց նորին, որ ստացաւ զսա յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնողաց իւրոց և զուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ. ամէն»։

Գ. – 211բ գրչէն մանրատառ. «Որք հանդիպիք սմա զտառապեալ զԽալիֆայ ծրոզս յիշեսջիք։ ՌՃ և ԼԵ (1686) թուին գրեցաւ»։

Դ. – 283բ ամբողջ էջին վրայ նկար մը (աստ թիւ 1) որուն տակ ծաղկողին գրչէն. «ՉԳրիգորիկ ծաղկողս յիշեա, վըստահ արա քեզ թամաշայ»։

Ե. – 368ա գլխաւոր յիշատակարան իր գրչէն[1]. «Փառք Հօր ամենակալի, և Որդւոյ միածնի, և Սուրբ Հոգւոյն ճշմարտի. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։ Որ ետ կարողութիւն տկար, անիմաստ և անարհեստ մեղապարտ սուտ անուն խալիֆայի. հասանել յաւարտ և ի կատարած՝ այսմ մատենիս որ կոչի Սաղմոս Դաւթի՝ և երգ Հոգւոյն Սրբոյ։ Ի խնդրոյ սրբանուէր և մաքրամիտ Ապարանցի Սիմէոն վարդապետի աշակերտ Տէր Աւետիս կրաւնաւորի ի յերկրին Վասպուրականի. ի քաղաքին Վանայ. ընդ հովանեաւ սրբոյն Վարդանայ զօրավարին։ Այլ և ի հայրապետութեան աթոռոյն Էջմիածնայ՝ տեառն Եղիազարի՝ ամենայն Հայոց։ Եւ առաջ նորդութեան սուրբ ուխտին Վարագայ՝ Կարապետ վարդապետին։ Եւ թագաւորութեան ազգին Հազարացոց՝ նոր ընծայ սուլթան Սուլէյմանին։ Եւ ի թվականութեան մերում. ՌՃԼԷ (1688) ամին. և Հռովմայեցւոց ամսոյն՝ Սեպտեմբերի երեքին. ի դառն և ի նեղ ժամանակիս. որ այսմ ամի՝ կարի յոյժ սղութիւն եղեւ հացի. զի քիլէն մինչեւ ի հինգ և ի վեց զուռուշ եղեւ։ Այլ և տղայոց մահտարաժամ։ Եւ անօրինաց նեղութիւն՝ և հարկապահանջութիւն յոյժ բազում ի վերայ

Մանրանկար Գրիգոր երէց վանեցիի

քրիստոնէից, բայց փառք մարդասիրին, կամք Տեառն օրհնեալ, շնորհողին զոհութիւն։ Արդ՝ որք հանդիպիք սմա. յիշեցէք ի սուրբ և ի մաքուր յաղօթս ձեր. և Աստուած ողորմի ասացէք՝ Ապարանցի Սիմէոն վարդապետի աշակերտ սրբանուէր և մաքրամիտ Տէր Աւետիս կրօնաւորին, և ծնաւղաց նորին, և ամենայն ազգականաց, մեծամեծաց և փոքունց առ հասարակ ամենեցուն. որ յոյժ կարի ջերմեռանդ սիրով, և յօժար փափաք հաւատով ետ զսաղմոս Դաւթի գրել, ի լաւ

1. Նորագոյն գրչէ մանուշակագոյն մելանով նոտրգիր «կրկին յիշատակարանները ընդօրինակեցի 1906 Յուլիս 13 Ս. Բարեղամ»։